Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4989 -4995

19,71.
202.3
G-38

9244

1402
40

ՀՐԵՇՏԱԿ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Հոգի խաղաղութեան եկեսցէ առ ձեզ

---

# ԱՂԵՐՍ

## ՄԱՄՆ ԵՐՐՈՐԴ

# ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Այս աղերսիս նիւթը որչափ որ առանկ չորս հինգ թերթի չափ երկու երեք աւուր մէջ պատրաստած ենք, որ մեր գրասենեակը կը մնայ. կուզէինք ամէնքը մէկ հատուած մը ընելով ամբողջ հրատարակել. սակայն տպագրիչները հինգ կամ վեց աւուր մէջ այսչափ ձեռագիր տպելը ամենադժուար ցուցնելով, բռնադատուեցանք մաս մաս բաժնելով ամէն շաբթու հինգշաբթի օրերը ձրիաբար հրատարակել, բայց այս շաբթու նիւթերուն եւ պարագաներուս շատութիւնը մեզ ստիպեցին որ 'ի՛սէր ազգասիրութեան աղերսնուդ թերթերը շատցունելով ընդարձակել եւ ամենահարկաւոր գիտելեաց ցանկ մը ալ աւելցունելով որ ցանկին մէջը այս շաբթուան մէջ եղած անցքերուն համառօտ տեղեկութիւններ ըլլալով, յօդուտ ազգիս. նպատակ ունենալով սէր, խաղաղութիւն, արդարութիւն եւ իրաւունք։ Ընթերցողը կրնան իմանալ ընաբանները որչափ ճառելի ըլլալը եւ նիւթին ծանրութիւնը. բայց եւ այնպէս ազգիս խռովութեան ժամանակը առանկ թերթի մը հարկաւորութեանը իմ ազգասիրութիւնս զիս բռնադատելով՝ ո՛չ ստակ եւ ո՛չ հանգստութիւնս խնայեցի այս աղերսիս Գ. մասին շուտով հրատարակմանը համար, եւ ինչպէս որ ըսի, ստակը անձամբ վճարելով ահա ձեզի ձրի կը բաժնեմ, խնդրելով եւ աղերսելով ձեզ. որ եթէ գուք ալ զիս վարձատրել կ'ուզէք. (ինչ աւելի ազգօգուտ գործեր ընելու կարողութիւն ունեցող շատ կայ մէջերնիդ) կ'աղաչեմ 'ի փառս խաղաղասիրին Յիսուսի Քրիստոսի ձեր մէջէն ազգակործան խռովութիւն, ատելութիւն, անմիաբանութիւնը մէկդի ձգելով սիրոյ եւ միաբանութեան, արդարութեան եւ իրաւանց պաշտպան ըլլաք. որով մենք չէ թէ մեր այս աղերսը ձրի բաժնած կ'ըլլանք. բայց ձեր մեղքերը մէկդի ձգելով՝ մեզի անվարձատրելի կերպով գոհ եւ շնորհակալ բրած կ'ըլլանք որուն փոխարէն գուք ալ թէ այս անցաւոր աշխարհիս մէջ խաղաղ կեանք կրնաք անցընել եւ թէ՝ յաւիտենական աննկարագրելի փառքին արժանանալ եւ մանաւանդ միշտ մինչեւ յկեանս եւ 'ի մահ ձեզի բարեմաղթու բրած կ'ըլլաք։

գտնուին անանկ մարդիկներ որ այս ամենավատ ածականէն չեն վրդովիր ու չեն խռովիր, բայց՝ ինծի համար այս ածականը մեծ նախատինք ու արհամարհանք է. և ասկէ՝ ի զատ մահապարտ է ըսելու չափ կամ առաւել ևս վշտացուցիչ է. որովհետև մարմնաւոր մահը այնքան աղդու չէ՝ որքան որ հոգեւոր և յաւիտենական մահը, և ասիկա շատ սարսափելի, ահռելի ու սոսկալի է։ Ես անձը իբրև հերետիկոս կը բամբասէ զիս, բայց թող լաւ գիտնայ, որ իմ սուրբ և անարատ Եկեղեցւոյս մէկ փոքրիկ քարը անդամ անանկ մատնիչի մը չեմ տար. այլ անոր գլուխը ջախջախելու կը գործածեմ։ Ես անօրէնը Խսկիւտարու մէջ քանի անձանց առջև զիս յանիրաւի բամբասելէն ետքը Ս. Խաչ Եկեղեցւոյ առաքինասէր Տ. Յոհաննէս աւագերեց քահանային առջևն ալ կը բամբասէ, բայց տես որ Աստուծոյ ճշմարտութիւնը անշեղլի է, վասն զի իմ Սուրբ կրօնիս ինչ աստիճան սէր ունենալս գիտցող քահանայի մը կ'երթայ դժբաղդաբար։ Եթէ նոյն քահանայն զիս ճաչցած չըլլար կարելի էր անէծք կարդար վրաս. այն քահանայն է այս՝ որ Խսկիւտարու ՀԷՄՊԱՆ ըսուած վարժարանը գտնուած ժամանակս՝ նոյն վարժարանին հոգևոր պաշտօնը կը

կատարեր. Երբոր այս եղելութիւնը նոյն քահանային կը պատմէի, իր նախկին սէրը չի պակսեցունելով և Սուրբ Եկեղեցւոյ հարազատութեանս փափաքող ըլլալով՝ կրկին նոյնը գիտնալ ուզեց ու ստուգեց։ Մ... Գ... ի՞նչ գիտցար, արդարութիւնը խանգարելն ու աւրելը սատանան դիւրին բան մը քարոզեց քեզի, բայց մեր երկրպագելի Աստուածը արդարութիւնն ու իրաւունքը պաշտելի և Աստուածային են կ'ըսէ, յիրաւի քու զրպարտութիւնդ մերժելու համար՝ դրչիս կարողութիւնը շատ ազդու է, բայց և այնպէս չարի մը վերայ երկարօրէն ճառելը բարոյականիս կը հակառակի. որովհետև զքեզ չճանչցողը լաւ ճանչցաւ։ Ա՛յ քեզի, և կրկին վայ...։ Մինթէ քեզի Մ... պատուանունը տուողը մարգարէ՞ էր, որ Յուդայինման մատնութիւն ընելիքդ գուշակելով՝ գիտցաւ թէ դուն դժոխային անտանելի չարչարանաց և վշտերուն արժանանալով մրռ, մրռ, մրռ, պիտի մրռմրռաս։ Եթէ քեզի այս մականունը տուողը գտնեմ, իմ շնորհակալութիւնս պիտի մատուցանեմ իրեն։ Ել գնա՛ և հեռացիր մենէ ընդունելու համար մեր արդար ու միանգամայն վրէժխնդիր Տէրոջմէն ըրած գործերուդ արժանի փոխարէնը, յաւիտենականութեան

անվերջանալի տանջանաց մէջ։

Դանք հիմայ ըստ իւր վկայութեան բարեգործ Ղ. . . Ս. . . ըսուած երկրորդ անօրէն մատնիչ ու զբպարտիչին։ Ինչպէս որ Յուդան Գեթսեմանիի պարտէզը երթալով իւր Տէրը և անոր անմեղ աշակերտները զինուորներուն մատնեց, անանկ ալ այս անօրէն անաստուածը գընաց մեծաղօր Տէրութեան Ս. Պատերազմի պաշտօնէին և յանիրաւի հրաւիրեց զինուորները առանց պատճառի՝ միայն իր մատնութեան կիրքը յագեցնելու և մատնութեան սատանային երկրպագելու համար։

Բայց զարմանալու բան չէ, Յուդան ալ զՔրիստոս մատնելու երբէք և երբէք իրաւունք և պատճառ չունէր, ուրեմն ո՞վ մատնիչ սո՛ւ քու փառքդ ալ քու ընկերդ անզգամին հետ Աստուծոյ անդառնալի վճռոյն համէմատ "որ զսուր առնուցուն սրով անկանիցին" և այս սուրը որ մեր վրայ գործածել տալու փափաք ունէիք, սատր փոխարէն աստուածային անիմանալի զօրեղ սրոյն կը յանձնեմ զձեզ. որով երկու ընկեր ինչպէս որ հիմա մէկ էք, անանկ ալ մէկտեղ դժոխային սարսափելի տանջանքներուն մեկտեղ ըլլաք. և դուք որ մեր սիրելի և առաքինի ժողովուրդին

ինչպէս որ բարեհնամ տերութեան զապ-
թիէները ու զենուորները հրաւիրեցիք,
հրաւիրեցիք, ես ալ քեզի և Մ... Գ...
անիրաւին համար Իսրաէլացւոց անդրա-
նիկ զաւկրները կոտորող հրեշտակին կը
յանձնեմ, որ զանի ձեր ըրած չարագոր-
ծութիւններուն համեմատ տանչէ ու պատ-
ժէ. ոչ անիրաւ զրպարտիչ հիչ չա-
մրչցար տերութեան զենուորները և բարձ-
բապատիւ բաշաները անիրաւ տեղը և ան-
պատճառ ամբաստանութեամբ անհան-
գիստ ընելուդ վրայ, ես ալ քեզի կը մաղ-
թեմ որ դուն անոնք և բոլոր ժողովուրդը
ինչպէս անհանգիստ ըրիր անանկ ալ դուն
այս աշխարքիս մէջ Յուդայի նման ան-
հանգիստ ըլլալով անոր փառքը առնես,
և առնելուդ կասկած մի՛ ըներ, որովհե-
տև արժանի և պարտելի է կը պօռան ժո-
ղովուրդը։ Այս 21 օգոստոսի մահաբեր ցա-
ւէն շփոթած և այս չարին ըրած մատ-
նութիւնը իմացած արտասուալի աչօք կեր-
թամ այս Ղ... Ս... մատնիչին տու-
նը 22 օգոստոս երեքշաբթի առտու (որուն
տունը դժբաղդաբար մեր փողոցը գտնը-
ւելով մեր դրացին ըլլալու պատիժը ու-
նեցեր եմ) առաւօտեան ժամը տասնըմէ-
կին կամ տասներկուքին միջոցները աճա-
պարանօք և արտորնօք նոյն անօրէնին

տունը կերթամ ոչ թէ առջի օրուան ը-
րած մատնութիւնէն գոհ ըլլալով բարե-
մաղթութիւններ ընելու. քաւ լեցի, բայց
հապա իւր անօրինական մատնութեան
միջոցները և կերպերը իմանալով ազգիս և
Քրիստոսի անարատ հօտին իւր գայթակ-
ղութիւնը և մատնութիւնը յիշելով, զա-
նոնք անանկ մոլի մատնութիւնէն ետ կե-
նալու պէտքը ու հարկաւորութիւնը չընչ-
չին գրիչս միջոցաւը իմացուներու համար,
գիտէք սիրելիներ իմ ինչ կըսէ, (այ էֆէն-
տիմ զապտիէ լազըմ տէյիլ մի իտի, օ
չափկընլարը տաղրթմա իչին քի Խաթրի-
կի էօլտիւրիւեօրլարրտը վէ զապտի յէլէ-
րի տեօյէ յօրլարրտը, պէն կիթմետիմ սե-
բասքէր բոշայեա վէ զաբտիէ բաշասընա
լաքին կիթսեմ նէ լազըմ կելիր) և իւր ը-
պասաւորը ինչպէս բէհեղզէփուղ իւր ծա-
ռաները կը կանչէ անկէ սուտ վկայու-
թիւն առնելու համար և կը հարցունէ (ծո
տիւն զապտիէ բաշասը նիչին պէնի իստէ-
միշտի սէօյլէսէնէ, աճէլէ իլէ քըլըճ քա-
պը վէ կիւմիւշ բըլաթ իչին տէ յիլմիիտի)
իւր դոռոզութենէն ստիպեալ խեղճ ը-
պասաւորը կը պատասխանէ (էվէտ էօյլէ-
եա) ահա վաստրկեցաւ այս կերպով ու-
բեմն իւր մատնութեան անմեղութեանը
իրաւունքը, դուն որի կը հարցունես ով ա-

նիրաւ. քեզի հետ եկուր հարցունեմ ազ-
գին առաքինի և ճշմարիտ Քրիստոնեա-
ներուն անոնք ինչ կըսեն կոր. գիտես ինչ
անէծք ու նզովք կը կարդանկոր քու ին-
ինքըզինքըդ գովելու արժանի համարած
չար անձիդ վրայ. քեզի համար չեն լար,
մինակ Կայէնը Աբելի արեանը դատախազ
և պատճառ ըլլալու չարութեանը լալու
պէս, որովհետև Կայէն մինակ իր Աբել եղ-
բայրը սպաննեց. դուն քու ամենասարսա-
բելի մատնութեանդ բոլոր ազգին դառ-
ները 'ի սուր և 'ի հուր կը մատնես, ա-
նոնք ալ ինչ բարեմաղթութիւն կընեն կոր.
գիտես որ ինչպէս դուն անոնք մարդու ո-
րոյ մատնել կուզէիր դուն ալ Աստուծոյ
ահաւոր և վրէժխնդիր սրոյն մատնուիս և
ոչ թէ մինակ դուն, այլ հապա քու յա-
ջորդ չար սերունդներդ ալ, ով չար անի-
րաւ դուն կըսես թէ (օ չափկընպարը տա-
ղըթմաղա) այն մարդիկը այս Քրիստոն-
եայները չէ՞ն. մինչև քու օրդ ասանկ ոչ
երբէք բան մը չընողները և չընելիքնին ալ
յայտնի է, և քու օրդ ասանկ վրդովմունք
ըլլալուն պատճառն ալ ուրիշ բան չէ, քե-
զի պէս չարեր ժողովուրդին մէջ գրտնը-
վելէն է յիրաւի պիտի ըսես ինծի (պիր ա-
տամ նէ եաբար) ինչպէս որ այն առտուն
ալ ըսիր, սակայն հովուի մը դնա հարցուր

որ ոչխարներու հօտի մը մէջ, թէ որ գայլ մը մըտնայնէ, ինչպէս շփոթութիւն կըլլայ այն հօտին մէջ, թէ և հօտը բիւրաւոր ըլլայ նմանապէս գնա քու գրլխէդ եղողնե-րուն հարցուր սա ռամիկի առածը · որովհետև դուն ասանկ խօսքերով կը հասկընաս (սինէկպիր շէյ տէ յիլ, միտէ պուլանտրբբբ) ով չար շատ աղէկ կըլլար որ փորձի համար քու Յուդայ ընկերիդ հետ միանալով Ս. ասակ եւ Յուդայ խօսդ մէկ ընելով երթայիք փորձի համար մեռնէիք (սակայն մեր նախահարց ազնիւ գերեզմաններուն մէջը չերթայիք, որովհետև անոնց ոսկորներն ալ անհանդիստ կընէք) և փորձի համար մեռած ժամանակնիդ թէ որ ես ալ ամենասարսափելի գործալ ունենամ, պիտի վազեմ գամ քու գերեզմանիդ վրայ տիքիլի դաշը և միւս չարին վրայ չէնպէրլի թաշը պիտի դնեմ, Սամսոնը այն միջոցին ինծի օգնական խնդրելով, որովհետև Սամսոնը ազնիւ քաջ էր ու վեհանձն, դուք որ չար մատնիչ և քաջ Յուդա և Ս. ասակ, հարկաւ Սամսոնն ալ այս ճանճրութիւնս սիրով պիտի յանձն առնէ, ձեր չարութիւնը փոխարինելու համար, (օ ճէվահաթ նէ իտի) կըսես ով չար, այս Քրիստոսի արեամբը գնուած այն հօտն է որ իւր եկեղեցական պարտականութիւնները կատա-

ելու համար, մեր բարերար Օսմանեան Ինքնակալներէն հրաման ունենալով Սուրբ Եկեղեցի ուղածնուն չափ երթալ, նոյն հրամանին համեմատ Քրիստոնէավայել գործքի համար եկած են (որ դժբաղդաբար ես հոն չգտնուիլս փոքրիկ կրօնազանցութիւն մը ըրած կը համարիմ զիս), սակայն կարծեմ Ֆէրմանի Էլի և սատրի քերեմներով պույրուլթուններ ունին ամէն կերպ Կրօնական արարողութիւններս ազատաբար կատարելու և ոչ թէ այսօր առնուած, այլ հապա ճենէթմէքեան ֆէթիհներէն 'ի վեր, և մեր հզօր և բարերար տէրը որ անոնց արժանի յաջողդնէ, արդեօք ի՞նչ կը կարծես ով յիմար Ս... Ձ... որ այս ազատութիւններս ձեռքերնուս կառնէ, մենք եկեղեցի գացած ժամանակնիս որ տուն Աստուծոյ է անոր մէջը անգամ մեր բարերար Թագաւորին երախտապարտ ըլլալնուս, և մեր ամէն մէկ ոսկորներուն և երակներուն տէրութեան հացին սնունդը ըլլալուն, բարեմաղթութիւններ կընենք միշտ "վասն բարեպաշտ Թագաւորաց և առաքինասէր իշխանաց զօրաց և զօրավարաց նոցին զտէր աղաչեցուք"։

Ո՞վ Ձ.. Ս.. ով անզգամ հզօր Օսմանեան տերութիւնը ասոնք չի գիտէ

կը կարծես, չար դուն կրսես (Խաթրիյի էօլտիւրէճէքլէր իտի) ոմ ստախօս ա՞ր-դեօք մարդ մը իր ստորագրութիւնը ու-բանանէ, հիմա այս դարիս մէջ մեռցունել կա՞յ, չէ թէ այս ազնիւ ժողովուրդը հզօր տերութիւնները անգամ ասանկ բան չու-նին. անմեղ Քրիստոսի հօտը եկածէր խառն բազմութեամբ տեսնելու, թէ իրաւ է՞ պատրիարքին իր ստորագրութիւնը ետ առնելը, սուտ խօսիլը, եկեղեցւոյ իրաւուն-քը պղծելը ևն՝՝ ևն՝՝, և երբոր տեսան որ իրաւ է, սրտերնին արիւնլուայ և խել-քերնին ցնորած շփոթեցան և ինչ ընել-նին չէին գիտեր, որովհետեւ շփոթե-ցան կրսեմ, վասն զի թէ որ շփոթած չըլլային, իսկոյն քեզ և Ս՝՝ Գ՝՝ Յու-դա ընկերդ ոստիկանութեան բարձրապա-տիւ Փաշային յանձնելու էին, որովհե-տեւ նոյն բարձրապատիւ Փաշան տերու-թեանը պաշտօնեայ ըլլալու պատիւ ունե-ցեր է, տերութեան իրաւունքը պաշտպա-նելու համար, իւր առաջին պարտակա-նութիւնն էր Ս՝՝ Գ՝՝ Յուդային վի-զէն բրոնել ու խամալը անմեղ դառները անկէ ստիպմամբ խնդրել, որն որ երբե՛ք կոտրած զմէլի մը անգամ չի տեսնայ նէ, Փաշան այն միջոցին Ս՝՝ Գ՝՝ ին ա-ռատ ընծայ մի կուտար, քաւ լեցի որով-

հետեւ անիրաւ մատնութիւնը ոչ աշխարհի մէջ և ոչ յաւիտենականութեան մէջ պատիւ կրնայ ունենալ, այլ հապա պատիժ արհամարհանք և հուր յաւիտենից, ուստի այն միջոցին Ս.. Գ... չար Յուդան իսկոյն իւր փափաքին կը հասնէր. բայց երանի թէ չեղաւ, որովհետեւ մենք Ս.. Գ.. ի պէս մատնութեան յուդայութեան եղեռնագործութեան սորված չենք, կարելի է կրկին մենք արտորնօք կերթայինք աղատելու ինչպէս որ ինքը պատրիարքարանին մէջը նստած ժամանակը արտօրնօք կը խօսէր անճոռնաբանութեամբ և միայնգամայն երկու թեւը վեր սոթթած իւր քրտինքը կը զովացունէր, իւր թաշկինակը ստէպ ստէպ անիրաւ երեսը հովելով, որ շուտով հանդչի և կրկին ազգը վիրաւորելու ելլայ. շատ աղէկ. որի ինչ ըրաւ, իրեն ըրաւ, ահա ինծի մէկ ատենապետ մը ըրաւ որ մինչև հիմա գրիչս կաղամարս պահեր էի, այժմ բաւարցակ յայտնեցի ամենուն. և կեանքիս մէջ միշտ և շատ յօդուածներ պիտի գրեմ ատոնց չարութիւնը յայտնելու և ճշմարիտ քրիստոնեան գայթակղութիւնէ աղատ պահելու համար, սա գէշութիւնն ալ ըրաւ ինծի որ ասկէ ետքը տպարաններու գրատուններու, և գրաշարներու երկրային ըս-

տակս տալով, երկնից փառքը պիտի գը-
նեմ, և շատ փափաքանօք պիտի տամ, ո-
րովհետև ես Մ··· Գ··· ի պէս կեանքիս
մէջը ե՛ւ թուղթի համար ստակ տուած
չունիմ բայց Մ··· Գ··· Յուդան կը յու-
սամ որ ժամը տուած ստակներէն կամ
աղքատի տուած ողորմութիւնէն շատ ա-
ւելի թուղթի փարայ տուած է Մահմուտ
բաշայի հրէայներուն, պարծենալով որ հրէ-
աները բարեկամս են ադէկը և աժանը
կառնեմ, յիրաւի մինչև հիմա չէի գիտեր
Մ··· Գ··· ինչու համար բարեկամութիւն
ունենալդ Մահմուտ բաշայի հրէից հետ,
ու կը մտածէի, երբ որ 24 օդոստոս այս
մատնութիւնը ըրաւ, այն ժամանակ հաս-
տատ հասկրցայ որ յուդայի սերունդէն
ըլլալուն հրեաները զանի սիրել ու յարգե-
լու պարտականութիւն ունին և ոչ թէ
մինակ իբիեիւզի թուղթը աժան տան, այլ
հապա այս միջոցիս ուրախեն որ մենք վը-
ռընտրվելուն իրենք այս քելէբիրը խաբ-
միշ պիտի ընէն: Նրանի քեզիու քունը-
մաններուդ, և սակէ եաքն ալ քեզի հետ
տեսնուողները այն Քրիստոս Աստուած
խաչող հրեաներէն ինչ տարբերութիւն կը-
նան ունենալ, արդեօք քու ինչ ըլլալդ գիտ-
նալէն եաքը թէորկրկին քեզի հետ տեսնը-
վին: Գանք քու ընկեր Ղ··Ս··վասակին,

կըսէ որ (Ռաթրիկի էօլտիւրիւյօրլարը) սակայն ով անիրաւ չի գիտես որ եկողնե-ը դահիճ չէին, և այն Պարիարքին համար կըսես, որ ինքզինքը ինք մեռցուց. ինչ կերպով. գիտեմ դուն ասկէ բան մը չես հասկնար սակայն սպասէ որ քու դռռոզ գլուխդ ջախջախեմ իմ նուրբ ու տըկար գրիչովս, մարդս պատիւ ունի, ան որ իր պատիւը չի ճանչնար, տնպատուութեամբ մեռած կը սեպվի. և այս պատուոյ դրոշմը մարդուս իր ստորագրութիւնն է. այն մարդը որ իւր ստորագրութիւնը կը զլանայ ու ետ կառնէ և կարհամարհէ, պատուով անմիջապէս մեռած կըլլայ: Պատրիարքը ասոնք ըրաւնէ, արդեօք մեզի համար ինքզինքը չի մեռցուցի, և մեր ասկէ ետքը անոր այ գողքին վրայ դրելու մեզ չիստիպեցնի, այս պատրիարքը առաքելաշնորհ հանգուցեալ Պօղոս պատրիարքէն մե՞ծ էր որն որ շփոթութեամբ ու անիրաւութեամբ մը ժողովուրդը գըրգռելով պատրիարքարանը վազեցին ֆէնէրովնէ, ինչ ըրաւ ձեզի պէս արդեօք անիրաւ տեղը, չէ իրաւ տեղը

(Շարունակելի)

## ԱՄԵՆԱՀԱՐԿԱՒՈՐ ՅԵՂԵԿՈՒԹԻՒՆՔԻՆ

## ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ստիպուած և կրօնասիրական հայրենասի-
րական և ազգասիրական սաստիկ ուցանկա-
լեւ գովելի կրակէն քիչ շատ սիրտս վառած,
և հոգիս քաջալերուած և սասնց գործքով
ալ հետևող ու փափաքող ըլլալս ապա-
ցուցանելու մտքով չեմ խնայած ոչ անձ-
նական բարեկամութիւն ու մտերմութիւն
կամ հաճոյք ու կողմնակցութիւն այս քա-
նի մը ՐՔիստոսի անարատ հօտին, գովե-
լի և առաքինի ազգիս, անարատ և հա-
ւատարիմ հպատակ խումբին փնտուիչ, եղ-
ծիչ, կործանիչ, վշտացուցիչ, թունաւորիչ
եղող մէկ քանի անիրաւները յայտ յան-
դիման նկարագրելէ բացատրելէ ու գրելէ
և ոչ թէ ինծի համար մինակ կամ իմ
կամքս յաղեցուցնելու համար, այլ հապա
գիտնալով մեր ազգին մեծագոյն մասը միա-
միտ իբրև աղաւնի ըլլալնին և այս բարի
միամտութիւններին ուրիշ չարերը ակամայ
իրենց մոլորութիւնները յաղեցուցնելու
գործածելնին · ուստի առաջին պարտակա-
նութիւն կրօնքով, երրորդ հայրենասիրու-

թիւն հայրենիքով, և երրորդ պարտակա-
նութիւն քաղաքական կրթութեամբ կամ
քաղաքավարութեամբ (սիվիլիզասիոն) և
այս պարտականութիւնները որչափ մեծ
ըլլալը ու որչափ ազդու պիտի տեսնանք
հետևեալ շարունակելի թերթերուն մէջ,
և վերի գրածիս քաջ տեղեակ ըլլալէս որ
ազգիս որչափ միամտութիւն ունի ալ նէ,
կրօնական մասին ջերմ պաշտպան է և հա-
ւատարիմ Քրիստոսի ծառայներ· ուստի
գլխաւորապէս պարտք սեպած եմ երբեք
կրօնական խնդիրը միւս խնդիրներէն ետ
չի ձգել, և կրօնքը և սուրբ եկեղեցւոյ հիմ-
ը ու քրիստոնէութեան հրամանագիրնե-
րուն լրումը ու կատարումը սուրբ և անա-
ռատ աւետարանին մէջ ըլլալէն, և այս ա-
ւետարանն ալ սովորաբար ժամերու մէջ
կրօնաւորներու ձեռքով կարդացուելէն,
նախ կրօնաւորներուն պիտի հարցունենք
թէ սուրբ եկեղեցւոյ մէջ կարդացած ա-
ւետարանին ինչ ըլլալը հասկցած կը կար-
դան, և ինչ ըլլալը ու ձեռքերնին առած
ան աննման գրքին ինչ արժէք ունենալը
գիտեն, և ժողովուրդը նոյն հրամաննե-
րը կատարելու կը խրատեն ու կը քաջա-
լերեն, և ժողովուրդն ալ զանոնք գերբնա-
կան պաշտօնեաներ, Աստուածային պատ-
գամախօսներ և Քրիստոսի փոխանորդներ

ըլլալը կը ճանչնայ, և գիտեն արդեօք ա-
նոնց տատիճաններուն մեծութեանը և ա-
նոնց հետ աշխարհական տերութեան պաշ-
տօնեաներէն աւելի ակնածութեամբ կը
վարվի՞ն։ Եւ գիտեն որ կրօնականի մը պա-
կասութիւնը ու յանցանքը ըստ կրօնական
մասի որչափ դատն դժուարին ու անփո-
խարինելի է, և թէ որ անոնց չար և սար-
սափելի մոլութեան մէջ ըլլալը տեսնալուն
ստուգելուն ու հաստատելուն ետքը դա-
նոնք ընդունելը որչափ կրօնատեաց գոր-
ծառութիւն, եկեղեցւոյ անարատ ու սուրբ
կանոնաց հակառակ և միանգամայն գլուխ
եկեղեցւոյ և տէր տերանց՝ Յիսուսի Քրի-
1402
49
ստոսի հրամաններուն նախատինք ու ար-
համարհանք է, վասն զի սիրելի հայրեր ու
եղբայրներ իմ Քրիստոս Աստուած ոչ
կողմնակցութիւն, ոչ կիրք, ոչ մեղք. ու
ոչ մոլութիւն ունէր մեղի պէս. անարատ,
անմեղ, սուրբ. և միանգամայն սրբութիւն
սրբոց էր և մանաւանդ մարդասէր և խը-
նամակալ տերէրնիս է, եթէ անկէ կասկած
ու երկիւղ ունիք թէ հրամանները (մեղայ
և կրկին մեղայ), և Պատրիարքին պէս և
վարդապետ Երուսաղէմայ փոխանորդի պէս
և կամ Ը. վարդապետին պէս կիրքով,
(ու մեղայ մեղայ մեզ խաբելու համար կամ
իւր աշխարհային կիրքերը յագեցունելու

համար հրամայած է աւետարանին Աստուածային պատուէրները, այն ժամանակը անանկներուն համար ոչ երբէք գիր մը անգամ չեմ գրեր, բայց քաջ և հաստատ գիտցած ըլլալուս որ ազգիս կրօնասէր, ճշմարիտ Քրիստոնեայ և պաշտպան անարատ մօր մերոյ եկեղեցւոյ ըլլալուն կը յիշեցունեմ անոնց՝ որ Քրիստոս ինչ ըրաւ նէ, անոնք ամենը չենք կրնար ընել մարդկային ուկարութիւններովնիս ալ նէ, գոնէ դիւրինները ընենք, ահա Քրիստոսի Յիսուսի վճիռներուն մէկն ալ կատարած կըլլանք և սասանկով Քրիստոսի փառքը կ'առնենք փոխանակ Քրիստոսի հրամանները ատելով մարդահաճոյ կողմնակցութիւններ ստանալու, հարցուցէք ուրեմն որոնք են Քրիստոսի այս հրամանը, ահա յիշեմ ձեզ. բացէք Մատթէոսի աւետարանին Գ. գլուխը Քրիստոսի գիրք ըլլալը միտքերնիդ բերելով և հոգւոյ աչքով կարդացէք Ջերմեռանդութեամբ "եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ խլեա զնա և ընկեա՛ի քէն, զի լաւ է քեզ, եթէ մի յանդամոց քոց կորիցէ և մի ամենայն մարմին քո անկանիցի՝ ի գէհէն հրոյն". սիրելիներ իմ, այս հրամանը գրպանէս չը-հանած ըլլալս յայտնի է. այն ամենակարող Աստուածը որ մարդուս ամենէն աւելի

յարգած սիրած և միանդամայն պիտանի եղած անդամը այսինքն աչուքները դայթակղութեան պատճառ եղած ժամանակը "խլեա զնա և ընկեա 'ի քէն" կըսէ նէ, չի խորհելով որ առանց աչքի մնան նէ, մարդիկ ի՞նչ ընեն կամ աչքին պէտքը ինչով հոգան, դուք որ 'ի Քրիստոս կը պարծիք, ինչպէ՞ս անոր հրամանին անհնազանդութիւն ընելով Քրիստոսի անարատ արեամբը գնուած հօտին հոգւոյ աչքին դայթակղութիւն տուողը չէք հեռացներ, հաղածեր ու նզովեր, միթէ (մեղայ և կրկին մեղայ) աւելի քան զ Քրիստոս խելացի և խորագէտ եղաք, որ Քրիստոս Աստուած չմոռածէր ժողովուրդին աչքսրդ մընալը ու աչքրդ դայթակղութիւն տայնէ "խլեա և ընկեա" կըսէ, դուք ինտո՞ր կը յանդգնիք պատրիարք ո՞վ դնենք ըսելով նոյն մոլորութիւն պատճառող անձը մինչև այժմ դեռ մէջերնիդ պահել, Քրիստոս Աստուած (մեղայ և կրկին մեղայ) արդեօք պատրիարքինպես բոլոր անձովը դայթակղութիւն եղողմը հանդպերնէ, "մինակ աչքին դայթակղութիւն տուողին ըսի, այո մոլորութիւններովը դայթակղութիւն տուող պատրիարքին համար չէ իմ հրամանը, սխալեցա՞յ" պիտի ըսէր, ինչ ընենք ուրեմն Քրիստոսի հետևող անունը ունեցող քը-

բիստոնեաններ մեր կիրքը յաղեցուցանելու համար զ՝Քրիստոս Աստուածը նորէն խաչելոյ՞ ընենք, կրնան կարելի է մէջերնուդ գտնուիլ անանկներ որ մինչև հիմայ Պատրիարքին անվայել ընթացքներուն յակամայից անտեղեակ ձևանալով ըսեն թէ (ինչպէս որ Մ . . . Ն . . . ըսաւ) եղբայր այս մարդուն գայթակղութեան պատճառ եղաւ ըսելու ինչ իրաւունք ունիս կամ արտօրնութիւն, եղբայր ասոր պատասխանը ինծի մի հարցուներ. ասկէ դարեր առաջ և միանգամայն ամենասուրբ աստուածային գիրքը գրող Մատթէոս աւետարանիչին հարցուցէք. ան ինծի կողմնակցութեան կամ ձեզի պարսաւանաց համար չէ գրեր, գիտէք ինչ կը գրէ սիրելիներս. նախ Աստուծոյ արժանի փոխանորդ եղողներուն ինչ աստիճանի մէջ ըլլալնին ճանչցնելու միտքով գիտես թէ գրած է (դուք էք աղ երկրի, ապա թէ աղն անհամի իւ յաղեցի, ոչ իմիք աղդիցէ այնուհետև, բայց եթէ ընկենուլ արտաքս և կոխան լինել 'ի մարդկանէ), ով Սրբազան և աստուածընտիր աւետարանիչ, կրսես որ աղը եթէ համ չունենայ ինչով աղին համը առնելու է կամ պէտքը հոգալու է, արդ ով աւետարանիչ եթէ նոյն աստուածային և սիրոյ միաբանութեան արդարութեան և իրաւանց և

կրօնք լուսաւորչական ուղղափառ եկեղեցւոյ աղը չըլլայնէ, ինչ ընելու է այն մարդը։ Թող ով աւետարանիչ որ մենք քանի մը բարբարոսներու կամքին զոհ երթանք դըրածդ մէկդի ձգենք ու մեղայ մեղայ նոյն առանց աղի ու առանց առաքինութեան համի եղողը Պատրիարքական Սրբազան աթոռը բազմած տեսնանք։ Ձեռս մրտածեր որ արդեօք "կոխան լինել 'ի մարդկանէ կը գրեանէ հիչ կրօնաւոր մը պակասութիւն ու մոլորութիւն անգամ ունենայ նէ հիչ աշխարհականները անոր դէմ պիտի կրնա՞ն ըսել, և ոչ թէ "կոխան ոտից ընել"։ այս ի՞նչ անարատ վճիռներ և այն ի՞նչ արդար քրիստոնեայի կատարումներ։ Պատրիարք ընելու արժանի մարդ չիկայ ըսողներ, չէք մրտածեր "կարող է Աստուած 'ի քարանցրս յայոցանէ յարուցանել որդիս Աբրահամու" պատգամը կամ աստուածային վըճիռը որ կըսէ թէ "եթէ ունիցիք հաւատրս քան զհատն մանանխոյ ասասջիք լերինս այսմիկ փոխեաց ասա՝ անդր և փոխեսցի։ և ոչինչ անհնարին լինիցի ձեզ։ արդեօք հիչ հայոց ազգին և սուրբ ու Լուսաւորչական հաւատքին 'հետևողներուն մէջ հիչ մանանխոյ հատի մը չափ ալ հաւատք ունեցող չի մնաց կարծելու հանդգնութիւնը կընէք, որ անոնց հաւատ-

քողը ոչ թէ լեռները փոփոխելու կարողութիւն ունենայ. արդ սիրելիներս եթէ հաւատք ունինք տէր յի կը պարծենաք և հաւատքնուդ կրդպչի ըսելով Նրուսաղէմայ ուխտէն դուրս պատրիարքք ըլլալը նզովեալ է ըսող կիրքերու մատնուած կրօնաւորներուն հրամաններովը կը կատարէք նէ, արդեօք նոյն հաւատովը այս գայթակղեցուցիչ պատրիարքէն զատ ուրիշ պատրիարք հաւատքով կրնանք ունենալը ինչո՞ւ չէք հաւատար, արդեօք անարատ Սուրբ հաւատքնիս սատանայական կիրքերու գործիք ընողին ինչ պատիժ կայ, արդեօք ինչու մոռցար (ասանկ ըսենք) Մատթէոս աւետարանիչ, ասանկներուն պատիժը յիշելէ, դուն որ կըսես թէ "որ որ լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց, և ուսուցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից". արդեօք անոնք որ հաւատքը իրենց չարութեան գործիք ընելով բոլորովին Քրիստոսի հրամանին հակառակ կը վարուին և անոր կամքը ընդ հակառակը կը մեկնեն նէ, ինչ կըլլանը ինչու չես դրեր, չէ թէ աստնցմէ ալ քան զհատն մանանխոյ քան զամենափոքրիկ շամանդաղ ու շառաւիղ կամ կէտի չափ հաւատք ունին կարծելու իրաւունք ունեցած կրնաք ըլլալ, անոնք որ

իրենց" քան զՀատն Մանանխոյ" հաւատքէն եվելեն բռնած, աշխարհի խաբեբայ ոսկին և չարութեան չաստուածը և ունայն աշխարհի փառքն է. ալ անոնց ինչպէս կըրնաս համոզել թէ մանանեխոյ հատի չափ հաւատք ունենաս նէ, պատրիարք փոխելու կարող չէ՝ այլ առաքինութեան Մասիս լեռ մը կրնան կանգնել, ինչ կը հարցունես ով աստուածային պատգամախօս անոնք իրենց կիրքերովը գոտած ու մոլութեամբը վաստրկած քանի մը անիրաւ մորուօքներուն խօսքերը ձգելով քու հրամաններդ մի՛ կատարել տալ կը կարծես սատնց համար չէր որ ունիցի ականջս լսելով լուիցէ ըսիք թէ որ հոգւոյ ականջ չունենան նէ լսելու քու հրամաններդ, արդեօք պատրիարքին ալ չը լսելին կուզես, Սրբազան Աւետարանիչ, այսչափ սաստիկ գրելս կարելի է քու գրած սիրեցէք զթշնամիս ձեր Աստուծոյ պատգամին կը յանդգնիմ կը գուշակեն. բայց ով աստուածախօս Աւետարանիչ քու գրածդ անոնց կրսեմ և ոչ թէ ես անձնական թշնամութիւն մը ունեցածի պէս կրգրեմ, բայց ինչ ընեմ կը յուսահատիմ պատրիարքէն անիրաւ թշնամութիւն չի վաստրկելու համար, քու վրէժխնդրութիւնդ վաստկիմ, սատնք չի գրելով, ինչ ընեմ

քու Սրբազան գիրքդ որ քրիստոնեայ ձեռքը չառներ շաբաթը անգամ մը, արդեօք սառնք հոն գրած չէս, միթէ այս գրքածներդ կարդալէն ալ զրկուինք այսչափ մարդկանց մէկ քանի բարբարոս և անիրաւներէն կրած զրկանքնիս բաւական չէ։ Մ՚իթէ 17 սեպտեմբեր սուրբ և երկրպագելի խաչին առջևը պատարագ ընող անզեղջ ու խռով և անարդիւ ուպարսաւիչ կրօնաւորին համար չէ՞ գրածդ հետևեալ Աստուածային պատգամը "եթէ մատուցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն. թող զպատարագն քո առաջի սեղանոյն, երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո"։ Ո՞վ սրբազան աւետարանիչ, ինչէ այո խէթը հարցունելը իրաւունքդ է. բայց ես ոչ թէ մէկ անհատ մը իր եղբօրը հետ ունեցած խէթը պիտի պատասխանեմ, բայց եթէ պիտի հարցունեմ ձեզի այն մարդը որ բոլոր ազգին համար "Մ՚իլէթիմ էտէպսիզ օլտու" ըսելու անիրաւ զրպարտութիւն կընէ, արդեօք ժողովուրդին կամ Քրիստոսի անարատ հօտին հետ խէթ ունեցած չըլլար արդեօք, արդեօք նոյն մարդիկը քու սուրբ աւետարանիդ ազդու եւ

միանգամայն աստուածային պատգամով մը հովուապետի տուած իշխանութիւնը ա-նարգելով պղծողին հետ խէթ չեն ու-նենար կրօնաք կարծել, բայց պատրիար-քը կրսէ եղեր որ ինք ժողովուրդին հետ խէթ չունի, բայց դուն ասանկ չես ըսեր ով սրբազան աւետարանիչ "և ադ յիշես-ցես ինչ խէթ" ըսել է որ եթէ միտքդ ան-գամ գալու ըլլայ որ եղբօրդ հետ խէթ ունենալդ՝ պատարագը ձգես պիտի, որ-չափ աս միջոցին պատրիարքին համար մինակ սխալած կրլլաս, որովհետև դրելու էիր "որ եթէ ունիցիս զխէթ ընդ եղբայր-քո", ասանկ գրա՝ ըլլայիրնէ սրբազան ե-ղածը արդեօք մինչև հիմա վաստրկած ա-պօրինաւոր իրաւունքներէն մէյ մալ վաս-տրկած չէր ըլլար, ես իմ կողմանէս հաշտ եմ ըսելով անիրաւ ու Քրիստոսի հրամանին հակառակ սուրբ և անարատ եկեղեցւոյ ա-մենաանարատ սեղանին երկրպագելի փրը-կարար և անմահ մարմին և արեան Տեառն մերոյ մատչելու իրաւունք իր խելքին նայ-ելով ունեցած չէր ըլլար. ո՜հ ո՜հ վայ ձեզի որ ասանկ Աստուծոյ հրամանը իր կամքին և փառքին կատարմանը յաղեցունելու գոր-ծածող մը դեռ մինչև այսօր պատրիարք կը ճանչնաք, ինչ պատասխան պիտի տաք Աստուծոյ անաչառ բեմին առաջը. դուք պի-

տի ըսէք որ մեր պատրիարքը մեզի սասանկ քարոզեց, արդեօք ինչ պիտի պատասխան կամ սասիկ նախատինք առնէր գիտէք. կարդացէք Քրիստոնեայ եմ պարծեցողներ "զի բազումք եկեսցեն և ասասցեն թէ ես եմ Քրիստոսն և զբազումս մոլորեցուսցեն։

Ես չեմ կարդացիր պիտի ըսէ, ըսենք որ ասոր պատասխան տուիք ըսելով թէ աւետարանին այն գլուխը մեր բանին չեկաւ չեմ կարդացենք, միթէ չե՞ պիտի ըսէ որ, Մովսէսին, մարգարէներուն և առաքեալներուն ևն" ևն" ամեն մէկուն գրածն ալ չեմ կարդացիր. ասոնք ամենքը երդում մի ընէք կըսեն. և ասոր ալ շատերը գոհ չեն ըլլար ու կըսեն թէ ուխտազանցութիւն մի ընէք, ինչու այսքան ատտուածային ընտրեալներուն խօսքը մտիկ չէք ըներ, ու պատրիարքին կիրքով եղած երդումը անվաւեր կամ ներելի է ըսելնուն մտիկ ընելով, ասկէ ետքը ուզածնուդ չափ սուտ ու փուտ իրաւ ու անիրաւ տեղը երդում ընելէ չէք վախնար, ես չե՞մ պօռացող պատուիրող ու խրատողը չե՞պիտի ըսէ, "այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի երդնուլ, մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, և մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և մի յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի"։ Ով Քրիստոս Ես-

ստուած արդեօք ինչ մատնող ու ուրացող-
ներ եղաւ այս մարդուն պէս, Ռու սրբա-
զան պատկերդ ուրիշները խաբելու համար
մեղայ մեղայ գործիք ընելով կամ անով եր-
դումը հաստատած ժամանակը այս երդու-
մը ընողին ինչ պիտի ըսես, ահա ժողո-
վուրդ, սիրելի հայրեր, եղբայրներս ու տե-
ղերս այս գրուածներն ալ ականջներնուդ
ծանր պիտի գայ. սակայն սահմանադրու-
թիւնը տեսեք, բացէք սահմանադրութեան
տեսարակին Ռ. էջը, տեսեք Ռրիստոսի
պատկերովը կնքած երդումը ոտքի տակ
առնելը, անարքելը, մեղայ մեղայ. ուրանալը
մինակ երդում ընելը կիրքով ըլլայ նէ մեղք
չէ. անիրաւ ու սատանայական պատգամէն
գոհ չըլլալէն զատ ժողովուրդը շուտով հա-
մոզելու համար ինքն ալ գրեթէ մեկ տար-
ուան միջոցի մէջ Ռրիստոսի երկրպագելի
պատկերովը կնքած երդումը կ՚աւրէ կը
նախատէ և աստուածային պատկերին
անարգանք կը բերէ, որովհետև "նախ առ-
նէ և ապա ուսուցանէ" աւետարանին մէջը
չարդացածէ, բայց սատանան իրեն սխալ
մեկներ է չարութեան ու անիրաւութեան
համար չէ, այլ հապա արդարութեան և
իրաւունքի համար է գրածը ու հրամայածը.
գործը հարկաւ դատաստանի և յաւիտե-
նականութեան սարսափելի տանջանքնե-

բուն կը մնայ, ով սրբազան. Հոն ինչ պիտի ըսես, ընես, գործես, մտածես, խորհիս, ևն" ևն. Հոն անանկ ատեան մընէ որ քու և քու նմաններուդ հետ կազմած ատեանիդ չի նմանիր, Հոն անանկ դատաստան մընէ որ քու և քու նմաններուդ ըրած դատաստանին չի նմանիր, Հոն անանկ վճիռ մը կայ որ քու աստուածային հրամանը պղծելով երդում ընելու հրաման տալու վճիռիդ չի նմանիր, Հոն անանկ արդար դատաստանարան մընէ որ քու երուսաղիմայ պատրիարք դուռնէն ներսէն չըլլայ ըսելով այն Երկրպագելի Քրիստոսի չարչարանաց եկեղեցիներուն մէջ եղած մեր ազգին կրօնասիրութեան աւանդները ինչ ըլլայ ըլլայ մեր ձեռքը ու մեզի պէս մէկ քանի կրօնաւորներու ու աշխարհականներու ձեռք մնալը իրաւունք ճանցունելու դատ կտրած դատաստաննիդ չի նմանիր. Հոն անանկ դատաւոր մը կայ որուն արդարութեան կշռոյն հաւասարութեան պարտքը ոչ երբէք կրնայ խոտորիլ աշխարհի հարստութիւններով, ճոխութիւններով, ստակով ինչքով և այլն և այլն, և որովհետև հիմակուան դատերնիս ալ արդարութեան դատաւորին կարօտ և միանգամայն անոր վաւերմունքներուն անմենահարկաւոր ըլլալուն պիտի դնենք անոր արդարութեան

կշռոյն ձախ կողմը, երդմնաղանցութիւնը, անհնազանդութիւնը, կիրքը, գողութիւնը, զրպարտութիւնը, անիրաւութիւնը, եկեղեցւոյ սրբապղծութիւնը, անարատ աւանդութեանց խանգարումը, սրբազան արիւնով գնուած իրաւանց եղծումը, վերջապէս երկրպագելի և ամենասուրբ անճառելի և անգին մարմին և արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անարժանութեամբ մատչելուն անիրաւ և հայհոյիչ յանդգնութիւնը, և կշռոյն աջ կողմը Աստուծոյ հրամանները, վաւերումները ու հաստատութիւնները սուրբ աւետարանի և առաքելական և սրբազան գրքերը։

"Որ ուրացի զիս առաջի մարդկան, յուրացայ եղէց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է,,։

"Որ անարժանութեամբ հաղորդի կրկին 'ի խաչ հանէ,,

"Որ 'ի հոգին հայհոյեաց մի թողցի նմա 'ի յաւիտեան,, և ասկէ ետքն ալ աստուածային հրամանին համեմատ և հաստատութեամբը յիմար կուսանքնեռուն առնելիք պատիժը այս ամենասարսափելի չարութիւնները գործողներն ալ առնելը անտարակոյս ըլլալով վերջապէս յիմար կուսանքներուն սարսա-

փելի, դողալի, ահռելի, անմեկնելի, ա-
նիմանալի պատիժը և տանջանքնե-
ը առնելին պիտի գրենք Դ. մասիս
մէջ և գիտէք մարդիկ, որ հովիւ մը որ
կողմը երթայ, նոյն հովուին հետևող ոչ-
խարները անտարակոյս նոյն հովուին գա-
ցած տեղը կերթան, նաւապետ մը նաւը
որ կողմը վարէ նաւին մէջը գտնուող ժո-
ղովուրդը նոյն նաւապետին ընթացքին
հետ կերթան, պարտիզպան մը ջրած ժա-
մանակը ջրին որ կողմը բանայ ետևէն ե-
կող ջուրը թէ և ծովու չափ ալ կարենայ
ըլլալ ժամանակաւ կրկին նոյն ընթացքին
կամ բացած ճամբային մէջ կերթայ, վա-
ճառական մը ինչ կրթութեամբ իր սպա-
սաւորները կրթէ, ալ անկէ ետքը նոյն
սպասաւորները այն կերպով իրենց անձ-
նական գործքերուն մէջը անգամ առաջ
կերթան, դասատու մը ինչ նիւթի վրայ
խնդիր մը առաջարկէ, աշակերտները նոյն
խնդիրին լուծմանը կատարման պարտա-
կանութիւն ունին, քարոզիչ մը ինչ նիւթի
բնաբանդնելով քարոզելու սկսի ունկնդիր-
ները նոյն նիւթին վերջաբանութեանը մէջ
նոյն բնաբանին հաստատութեանը կը լը-
սեն, ևն՝՝ ևն՝՝ ասոնցմով Դ. թերթեր-
նուս մէջ պիտի հաստատենք պատրիար-
քին պատիժք և անոր կողմնակիցներուն

կամ պաշտպաններուն որ կողմ երթա-
լեքնին, բայց ցաւով պիտի գրեմ որովհե-
տև իմ ազգիս էն փոքրիկ ոչինչին կորստ-
եան հաստատութեանը գրելու գրիչ չու-
նիմ, իրաւանց վրայ գրելով կարող ընել

Շարո-Նաղելէ

## ԸՕԴ

Ո՞վ սրբազան նախկին պատրիարք Կ. Պոլսոյ և սրբազան ծայրագոյն արք եպիսկոպոս Յ... գիտես արդեօք որչափ ծանը ցաւէ ձեզի պէս առաքինութեան ըսպասեալ ալևորացեալ ծերունիէ մը աշխարհականներու չար կիրքերու և քանի մորուքներու խաբուած ըլլալը և անոնց կամքին համեմատ վարուելով անմեղութիւնը մեղքի, իրաւունքը անիրաւութեան, կրօնքը անկրօնութեան, ևն" ևն" փոխելը տեսնալը։ Խաբուած կըսեմ որովհետև ձենէ չեմ յուսար որ չի գիտցած ըլլաս նախ Ռաղկէդոնի սուրբ ժողովին և ասոր նման սրբազան առաքելաշաւիղ և չարչարակիր նահատակներու և մարտիրոսներու ժողովներուն մէջ որոշումները. անաթէմաները և նզովքները ինչ զգուշութեամբ և ինչ կարգով եղած ըլլալը չի

գիտնալը, ձենէ չեմ յուսար որ նոյն ժո-
ղովքներուն մէջ եղած անեծքներուն շա-
տերը նմանապէս առաքեալներուն և հայ-
րապետներուն և մարտիրոսներուն կրկին
և կրկին հաստատութեամբ վաւերացեալ
անեծքներուն ունկնդիր չըլլալով ժամա-
նակին պարագաներէն ստիպեալ իբրեւ
արգելք երուսաղէմի պատրիարքի որոշման
համար մինակ մէկ պատրիարքէ մը տրուած
իբրև արգելքին տարբերութիւնը չի ճանչ-
նալը։ Ձենէ չեմ յուսար որ Ս... վարդա-
պետին իր կամքին հանելու համար եւ
կամ իր չար կիրքերուն ծառայելու հա-
մար քանի մը մոլեռաշխարհականներու հետ
սրբազան և առաքելաշնորհ հոգևոր օրէնք-
ներու խաբելու խորհրդին մէջ գտնվե-
լուդ (խաբելու ըսեմ որովհետև թէ որ Ս.
... վարդապետը աղէկ մարդ է ինչու գո-
ղութիւն ընելու պէս առանց ազգային ժո-
ղովին հրամանին և հաւատարմութեանը
անհնազանդութիւն ընելով բայց ներեցէք
այս մասին անհնազանդութեան ֆեթվան
Պատրիարքէն առած է . . . . . .
ինքն ալ Պատրիարքին հնազանդ ու . .
. . . . . .
յանիրաւութիւններուն պաշտպան ըլլալուն
քանիո որ Պատրիարքը պատրիարք է
ինքն ալ նոյն ընթացքին մէջ գտնվելու

երդում ըրած է . . . . . .
որովհետև բարկութեամբ երդում ընելը
մեղք չըլլալուն ֆեթվան . . . . .
ուզած ժամանակը Պատրիարքէն կրնայ
առնելը աղէկ գիտցած է . . . . . .
մինակ աս մասը աղէկ գիտէ արդէն ու-
րիշ գիտցածները յայտնի է . . . . .
պարապ բաներ գրելով· ժամանակ չանց
նենք . . . . . գաղտուկ իւր ըս-
պասաւորը կը խրկէ Երուսաղէմի ստակը
ու ինչքը պաշտպանեմ պիտի ըսողը այն
չէ որ այս միջոցին ոտակին որուն ըլլա-
լը մոռնալով իր քէֆին կամ կամքին գոր-
ծառնութիւններ ընելու կը վատնէ մոռնա-
լով որ քիչ մը ժամանակառաջ մեզի հար-
ցունողը անէ թէ Երուսաղէմի հաշիւը ինչ
պիտի ընենք, հիմակ ալ մենք պարապ տե-
ղը այս վարանումը տեսած ժամանակնիս
իրեն չի պիտի հարցունենք թէ որուն ըս-
տակը ինչո՞ւ և ի՞նչ պարագաներու մէջ
գործածեցիր, ահա Սրբազան Պատրիարք
. . . ասոնց հաշիւ չի ցուցնելուն բուն
պատճառը. որովհետև թէ որ հաշիւ ցու-
ցունէ ալ անկէ ետքը Երուսաղիմայ տու-
նը անչափ կահ կարասիք և իր մարմի-
նը այնչափ փառաւոր հագուստ և մոլի
ստամոքսը այնչափ քաղցրաճաշակ կերա-
կուր չունենար, ասոնք չի գիտես արդեօք

ով Սրբազան ասոնք չիգիտնալը քէնէ չեմ յուսար։ Չեմ յուսար ով Սրբազան որ գիտցած չըլլաք թէ որչափ յանդգնութիւն է շաշխըն խատրի տեղ դնելով անանկ բարձրաստիճան և միանգամայն . . . . . անանկ առաքելաշաւիղ Սրբազան Կաթուղիկոսի մը կողմնակցութեամբ մինակ մէկ կողմը մտիկ ընել տալով ֆեթվա ուզելու ելլալը (այս ֆեթվան այսինքն մէկ կողմ մտիկ ընելով տրված ֆեթվան որ ապուշ աստիճանաւորը կրնայ արդեօք ընդուներ կամ որ խատրն կրնայ տալ)։

Չեմ յուսար Սրբազան որ գիտցած չըլլաք թէ անարատ մօր մերոյ և սուրբ Լուսաւորչի արեամբը գնուած եկեղեցին մեզ կիրք կամ կամք յաղեցունելու համար ասանկ իբրև կոնդակ գրված կարդալը ի՞նչ մեզի ըլլալը։

Չեմ յուսար Սրբազան որ գիտցած չըլլաք թէ այս կերպերով միջոցներով կամ սկզբունքներով ժողովուրդին միամիտ մասը Ռուսական հակման տակ դնելիդ որչափ ասանկ առաքինի բարերար և մարդասէր Սուլթան Ազիզ տիրոջնուս բարի կամքին և դիտաւորութեանցը դէմ ըլլալը չի գիտնալով անհնազանդութեան և հպատակութեան արդար իրաւանց դպած ըլլալդ։

Եւ վերջապէս չեմ յուսար Սրբազան որ այս կերպ վարուելով Քրիստոսի արեամբը գնուած հօտը երկպառակութեան և շփոթութեան մէջ ձգուած ըլլալը չի ճանչցող մարդ կրնար ըլլալ։

Չեմ յուսար ով ծայրագոյն արք եպիսկոպոս որ մոռցած ըլլաք Քրիստոսի և առաքելական հրամանները նոյնպէս սուրբերու և հայրապետներու։

"Զուգութիւն է մայր բարեաց անզուգութիւն է ծնող ամենայն չարեաց,,

"Միութիւն է սկզբն երջանկութեան և անջատումն տեղի խռովութեան,,

"Սկիզբն իմաստութեան երկիւղ տեառնէ,,

"Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ,,

"Զխաղաղութիւն տամ ձեզ զխաղաղութիւն թողում ձեզ,,

"Սիրեցէք զմիմեանս որպէս և ես սիրեցի զձեզ,,

"Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին,,

"Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւք,,

"Որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի և բարձրացուցանէ խոնարհեսցի,,

"Մանուկ էի և ծերացայ և ոչ տեսի զարդարն արհամարհեալ և որդի նորա թէ

մուրանոյ հաց »

« Ահա տեսի զամբարիշտն բարձրացեալ իբրև զվայրսն լիբանանու, անցի և ոչ տեսի ինդրեցի և ոչ գտի տեղի նորա։

Նայն և այն . . . . գանք աշխարհական գրվածներու Գոլոմպոսի ով ընտոր մարդ որու զաւակ ըլլալը հասկցուր և աշխատէ քարացեալ այն գլուխներուն մէջ խօթելու որ կրսեն թէ ուշադ եաղբՀը ճահիլ ճիւհիլ տեօրտիւ պէշի իւզ եաշընտա չափկընկարտրը պու շէ յէրի եաբան վէ Ռաթրիկի խատէմէ յէնկէր։ (Ով անիրաւ յանդուգն չար և զբպարտութիւն)։

Ով Սրբազան կաղաչեմ յիշէ այն հոգով Աստուծոյ իրաւունքը չի հասկցող յիմարներուն, մեծն Պափոլէոնին, Լամարթինին տիւք տը Ռաւուռին և այն և այն ինչ մարդիկ որու զաւակ ինչ սերունդներէ ըլլալնին։

Ով Սրբազան վերջապէս յիշէ անոնց աստուածընտիր առաքեալներուն ինչպէս աշխարհքի շատ վար արհեստներէ ու աստիճաններէ աստուածընտիր ըլլալնին։

Ով Սրբազան յիշէ անոնց սուրբն Ըստեփաննոս առաջին Մարտիրոսին և Ընդրանիկ նախասարկաւագին քանի տարու ըլլալը և Յովսէփ գեղեցիկին քանի տարու ըլլալը ու հանճարը . և այն և այն կը ինդ-

բեմ ով սրբազան ասոնք յիշելու ճանաչ-
ութեանը կամօք և յօժարութեամբ ըն-
դունէ որովհետև սրբազան արհեստիդ դը-
բամագլուխներն են և այն մարդիկը կարդալ
չեն ուզեր եղեր մեր տեսրակը. չի գիտեմ
կարդալ չիգիտնալնուն համար եթէ Աս-
տուծոյ արդարութեանը լոյսը չունենա-
լով խաւարեալ ըլլալուն համար, և կամ
Աստուծոյ իրաւունքը կամ անարատ մօր
մերոյ սուրբ եկեղեցւոյ հաստատութիւնը
իրենց ստակներովը չի կրնալ կործանել-
նուն համար, յիշէ՛ և դա՛տէ ով Սրբազան
որ մենք Աստուծոյ շնորհիւը ճանչցած ենք
"սկիզբն ամենայն իմաստութեան երկիւղ
տեառն ըլլալը" և ասիկայ քաջ գիտցած և
միշտ հետևող ըլլալնուս սուրբ աւետարա-
նին այն հրամանին ու Աստուծոյ պատ-
գամին հետևող ենք որ կըսէ, "դուք էք
աղ երկրի". "դուք էք ճրագ երկրի" մենք
ասոնց մեկնութեանը ուսումնականու-
թեամբ և օտար ազգաց լեզու գիտնալով-
նիս օտար աստուածաբանութիւններու
մէջ անգամ կարդալով Քրիստոսի կոչած
և արժանի փոխանորդ ընտրած կրօնաւոր-
ները ինչպէս սիրելի ու յարգելի ճանչցած
էնք և ինչպէս որ Քրիստոս Աստուած
իւր աստուածութեամբը աշխարքիս մէջ ե-
ղած անմէնահարկաւոր պետքերուն էն գե-

բաղանցներուն կարգը դասած է կրօնաւոր-
ները մենք ալ ճշմարիտ Քրիստոնեայ և
Քրիստոսի երջանկութեան ճամբուն հե-
տևող ըլլալնուս Քրիստոսի արժանի փո-
խանորդ ըլլալու պատիւը ունեցող կրօ-
նաւորները անանկ կը յարգենք ու կը սի-
րենք և ոչ թէ այն մոլի և հայհոյիչներուն
պէս երկու խօսքին մէկուն մէջ այլանդակ
հայհոյութիւն ընելով կրօնաւորներուն (. . .)
լեր ըսելու սոսկալի և յանդուգն և մի-
անգամայն աստուածային անարգանօք ե-
ղող խօսքը բերաննիս առնողներ ենք, հի-
մա ով Սրբազան Աստուածային անէծքէ չի
վախնալով պատրիարքի մը ընտրութեան
համար դրված անէծքէն վախցողներէն ա-
սոնք հէ հաւատանք հէ խենթ ըլլանք անոնց
պէս հէ, անանկներուն պէս հոգինիս կոր-
ստցունենք հէ, մենք ասոնք ճանչցող ըլ-
լալովնիս մեղքէ փախչելով լուսաւորեալ
ըլլալնուս անոնք ալ մեզի պարսաւելնուն
արտօնութիւնը դուն մի կուտաս կոր ա-
նոնց մեղա՞ և մեղա՞, ալ ասկէ ետքը "ար-
իւն ձեր 'ի գլուխ ձեր", մեր ընտոր պարտքն
է իրաւունքը գրելով աղէկը աղէկ և գէ-
շը գէշ գրել աւետարանին այն հրամանը
գիտցած ըլլալնուս թէ մեծ մեղք է լոյսին
խաւար և խաւարին լոյս ըսելը սատա-
կով ձեր բարիքները ինչպէս յիշեցինք

և ինչպէս որ մեզի իբրև բնական պար-
տականութիւն սեպած ենք կրօնասէր ըլ-
լալ ու առաքինի կրօնաւորները սիրել
(և ոչ թէ Ը . . . վարդապետի պէս
Իւսկիւտարու շոգենաւին մէջ ձիկա-
ռա խրմելով իր ամենափոքր կրից չի
համբերելու անգամ սորված ըլլող ժողո-
վուրդին միամիտ մասը գայթակղեցնող
գոռոզ վարդապետի պէս ասոնց ամէնը
գրելու կամ աւելի սաստիկ գրելու իրա-
ւունք ունիմ որովհետև ես իմ արհեստիս
մէջ իմ աշխարհային շահուս համար այս-
չափ տառապանք ու համբերութիւն ընե-
լու յանձնառու կըլլամ՝ սիրելիներս այս
Ը . . . վարդապետը արհեստը աստիճանը
և վիճակը ինչու չի ճանչնար ով Քրիստո-
սի հետևող Քրիստոսի անուն ովը պարծ-
ցող հայեր ով կուտայ կոր ասոր այս ար-
տօնութիւնները դեռ չի մոռցանք "Փա-
տիշահը վէ բաթրիկի սէվէն իստէ յէն իմ-
զա գօսուն" ըսած առաջարկութեանը և
սատանայական ցանկին մատնիչութեան
պաշտօնը, ասանկները և ասոր նման աշ-
ճիութենէն այվակութենէն պախալ ու
զաւզաւաթճիութենէն կրօնաւոր եղողնե-
րը չեն որ կուզեն պատրիարքը իրենց չա-
րութիւններուն գործակից և պաշտպան

ըլլալու համար և ասոնց ջատագով եղող հասարակութեան այն մասը չէ՞ որ ասանկ-ները կը սիրեն շուտով մեղքի թողութիւն տալերնուն համար, կամաւ Քրիստոսի օրէնքը աւրելով ևն" ևն" . . ) անանկ ալ այս խոստմունքս մինչև ինծի հետ գերեզման իջեցունելուս և տկար գրիչս մինչև այն օրը պարիսպ ըլլալուն անկասկած ըլլալով կը խնդրեմ կը պաղատիմ և կաղերսեմ որ 'ի փառս մարդասիրութեան խաչեցելոյն Քրիստոսի ջանանք խաղաղութիւնը շուտով հաստատելու համար ժամ մը առաջ պատրիարքը իր հովուական սուրբ աթոռէն վերցունելով կատարել սիրով և համբերութեամբ Քրիստոսի փոխանորդ ըլլալու պաշտօնեիդ և մեզ յաւիտեան շնորհապարտ և խորին երախտագէտ ըլլալու պատուոյն արժանացունել յուսով ակնկալութեամբ և փափաքանօք սպասելով :

Ոսկանեան մեծապատիւ Յակոբ աղա ճարտար և ուշիմ ուսումնականին միանգամայն առաքինի և ազգասէր անձին սիրտը որչափոր իմ աշակերտութեան ժամանակս անձամբ փորձեր էի, սակայն այժմ կը գերազանցէ այն փորձը իւր մէկ տետրակովը " ազգիս վիճակին վրայ ընդ-

հանուր տեսութիւն մը ,, վերնագիր ունե-
ցած իմաստուն գրուածով մը որով թէ
մեզ յաւիտեան երախտապարտ ըրաւ և
թէ մինչև հիմա ազգիս գրատուները պեր-
ճացուցող ոտանաւորներէն աւելի ազգիս
լուսաւորեալ մասին ընդհանուր համակ-
րութիւնը կրկին և կրկին ստացաւ (Ներե-
ցէք սիրելիներ այս ամենիւ անձը այսքան
սիրելու միտքերնիդ բերելով "նման ինմանն
սիրէ" ասոր պէս ալ ինչպէս որ հարստու-
թեամբ լեցուածները չամուռճին կը սիրեն
ես ալ պարտականութիւն սեպած եմ ի-
մաստութեամբ բարգաւաճեալները սիրել
և փափաքիլ միշտ շատնալուն)։

Ինչպէս որ մեր պարտականութիւնն
է իրաւունքը քիչ շատ ճանչցած ըլլալնուս
բարին սիրել չարը գայթակղեցնողը ատել
նոյն իրաւանց պարտականութիւնը զիս կը
բռնադատէ Արևելեան Դար այս երկպա-
ռակութեան խռովութեան արծար եղողը
պարսաւել կրկին կարդալով 10 սեպտեմ-
բեր գրած մէկ նամակին համար, որուն
պատասխանը որչափ որ գրել կուզէի ժա-
մանակը ու տպագրիչը արգիլեցին պատ-
վիրելով դ. Թերթիս մէջ անյապաղ կա-
րենալ գրելու։

Կը խնդրեմ որ ընթերցող լուսաւոր-
եալ և իմաստուն և իմաստասէրները ա-

զերսիս մէջ եղած քերականական, շարադրական, տրամաբանական մանր մունր սրխալներուն ներողամիտ ըլլան ժամանակին ստիպմամբը շուտով և առանց տեղեկութեան գրելնիս գիտնալով և ասոր ապացոյցը մեզի հետ մտերմութիւն ունեցող բարեկամներնուս կրնան ստուգել, և այս պակասութիւնը յատուկ տեսրակով մը հրատարակելն ալ պարտք ճանչնալով կը խնդրեմ որ իրենք ալ մինակ ինծի օգնական ըլլան խնդրելու աղբիւրն իմաստութեան հոգւոյն սուրբէն և ճառագայթ աննկարագրելի լուսոյն հոգի խաղաղութենէն որ աս յամառեալներուն իր շնորհքները տայ որով մենք ալ միշտ աղգօգուտ բարոյականներ ու կարգադրութիւններ գրելու ստիպվինք և ոչ յակամայից ասանկ գրուածներ ըստ պահանջման ժամանակի կամ պարագայից :

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

Արդարեւ աղերսիս գիրերը յիրաւի չափէն աւելի մեծ են՝ որ տարպադրութիւնն ալ շատ ծանր պատճառելը յայտնի է բայց ինչպէս որ ազգուտ գործի մը ձեռնամուխ ըլլալու սէրը ու փափաքը մեզի ստիպեցին ամէն կերպ զոհեր ընել 'ի սէր ազգիս որ այս պարագայիս մէջ անդամ՝ երբէք բան մը չի խնայեցի եւ որովհետեւ դժբազդաբար եւ ցաւոք որտի գիտեմ որ Ազգերնուս մէջ ընթերցման փափաքը մինչեւ այսօր՝ լուսաւորեալ ազգերուն նայելով, մեռած է։ Ուստի գուշակեցր թէ գրերուն մանր ըլլալէն ալ ընթերցողը ձանձրանալով չեն կարդար եւ ասոր համար այս տեսակ գրերով տպել տուի. աղաչելով որ ընթերցողը կարդան եւ շնորհ ընեն մեր աղերսին խնդիրները կատարելու. որով մենք ալ աւելի քաջալերուելով 'ի սէր եւ 'ի յառաջադիմութիւն ազգիս աղերսնիս շարունակենք մինչեւ որ ազգերնիս շփոթութեանց անդունդին բերնէն հեռանալով՝ իրաւանց եւ արդարութեան դաշտին մէջ ընթանայ եւ նոյն դաշտին մէջն ալ յառաջադիմութեան հասնելու միջոցները ցուցունելով, ուանիկ եւ թէ ալ ուրախ սրտիւ եւ երախտապարտ ոգւով միշտ ազգին օգտին համար յոգուածներ ու յայտարարութիւններ եւ հրատարակութիւններ ընելով։

Անամ խնդրանաց կատարմանը փափաքող եւ ցանկացող մեծաւ յարգանաք

Կ. Պոլիս
3 Հոկ. 1861

Խմբագիր — Տնօրէն
եւ միանդամայն ձրի հրատարակիչ
Բարսեղ Գէորգեան երեքեղբարքեանց
ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՅ
եւ բնիկ Պոլսեցի

Ո՞ղերսիս վերաբերեալ գործի մը կամ հրամանի մը ե՞ կամ բացատրութիւնն ու ապրուստրութիւնն մը համար՝ պէտք պիտանալ ու ապրիս գրել — խօսել ուղղէք սիրով ե՞ յարգանօք կ'ընդունիմ 'ի փոխս ապրելու. ե՞ դիւրութիւնն համար կ'ինամցնեմ որ Ընթերցասիրաց սառնամանիքական ապրստրոնը Աբեր — Նոր — Խանի առաջին յարկի դրանը մէջ թիւ — 6. Իրկին իրենց նամակները կամ ապրստրութիւնները։ Իսկ անձամբ պէտք պիտանալ ուսուցիչներն հոն կամցընեն որ ոմանք կամ որ դիպուածոց գացած ըլլալու դիտաւորութենէն՝ ապրնան գտնել պէտք։ Ե՞ կարող չեմ ընթերցողներուն կամ փափաքողներուն որ մեր անձնական սենեակները վանապարեն գարձուցիչներուս արնելք ելլալու համար.

ԿԱԶՄԱՏՈՒՐ Ա. ԲԱՂԴԱՆՈՒՇ
ATELIER DE REL
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չախմախճիներու մեծ նոր խան թիւ 5-6

4989-4995